

**ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

ՖԱԿՈՒԼՏԵՏ	ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ԱՄԲԻՈՆ	ՊԱՏՄՈՒԹՅԱՆ, ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԴՐԱՆՑ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆԵՐԻ
ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՄՈԴՈՒԼ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՄԻՉ ԵՒ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՔԱՆԱԿ	1410B4/04, 1 ՄՈԴՈՒԼ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ԿՈՒՐՍ/ԿԻՍԱՄՅԱԿ	1-ին կուրս, 1-ին կիսամյակ
ԴԱՍԸՆԹԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ	<ul style="list-style-type: none"> • Ընդարձակ եւ հիմնարար գիտելիքների հաղորդում Հայաստանի տարածքի, սահմանների ու վարչական կարգի վերաբերյալ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: • Ձեռք բերած գիտելիքները գործնական կիրառության համար վերլուծելու հմտությունների ձևավորում և հետազոտական մակարդակում կրթության շարունակության ապահովում • Ձեռք բերած գիտելիքները գնահատելու եւ վերլուծելու համար անհրաժեշտ մեթոդների ընտրության հմտությունների ձևավորում • Մովորողի բարոյական և ազգային նկարագրի, հայրենասիրության ու ազգային արժանապատվության դաստիարակություն, իր պատմական արմատները իմացություն, պատմական հիշողության ձևավորում: • Հայրենի պատմության, տարածքի ճանաչողություն, պատմական զեղծարարություններին հակահարված տալու կարողություն
ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	<p>ԳԻՏԵԼԻՔ</p> <ul style="list-style-type: none"> • Նկարագրել Հայկական լեռնաշխարհի բնական պայմանները • Լուսաբանել Պատմական Հայաստանի ճանապարհներն ու դրանց նշանակությունը • Նկարագրել Հայաստանի վարչատարածքային բաժանումները պատմական տարբեր ժամանակահատվածներում եւ բացատրել դրանց առանձնահատկությունները • Ճանաչել, նկարագրել եւ բացատրել Հայաստանի արևորագույն վայրերի (քաղաքներ, ավաններ, բերդեր, ճակատամարտերի վայրեր) տեղագրությունը

- Նկարագրել Հայաստանի վաղ միջնադարի պատմաաշխարհագրական առանձնահատկությունները ըստ Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց»-ի
- Ճանաչել եւ բացատրել Հայաստանի բնակչության և տնտեսության աշխարհագրությունը:
- Ներկայացնել Հայաստանի պատմական աշխարհագրությանը վերաբերվող զանազան հարցերի շուրջ եղած տեսակետները

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

- Հայոց պատմության զանազան հարցերի լուսաբանման համար հասկանալ եւ օգտագործել Հայկական լեռնաշխարհի ֆիզիկաաշխարհագրական, Մեծ Հայքի վարչական, Հայոց պատմության տարբեր ժամանակաշրջանների պատմական քարտեզները
- Քննել Հայկական լեռնաշխարհի հնագույն պետական կազմավորումների վերաբերյալ պատմագիտության մեջ առկա տեսակետները
- Համեմատել եւ քննել «Աշխարհացոյց»-ի ստեղծման ժամանակի ու հեղինակի ինքնության հարցի շուրջ պատմագիտության մեջ առկա տեսակետները:
- Քննել ու համեմատել Հայաստանի տարածքը, սահմաններն ու վարչական կարգը պատմական տարբեր ժամանակահատվածներում
- Առարկայի ուսումնասիրությամբ վեր հանել և մոռացությունից փրկել պատմական Հայաստանի տեղանունները:
- Ուսումնասիրելով աղբյուրները եւ պատմաաշխարհագրական զանազան հարցերի շուրջ եղած տեսակետները՝ քննել, հիմնավորել, գնահատել դրանք եւ կատարել գիտական եզրահանգումներ

ՀՄՏՈՒԹՅՈՒՆ

- Պատմության դասավանդման ընթացքում յուրացված գիտելիքները տրամաբանորեն և հետևողականորեն ներկայացնելու, մեկնաբանելու, վերլուծելու արհեստավարժ մակարդակ:
- Պատմաաշխարհագրական գիտելիքների օգտագործմամբ բազում քաղաքական կնճռոտ հարցեր մեկնաբանելու եւ բացահայտելու կարողություն
- Ձեռք բերած գիտելիքները մատուցելու մասնագիտական բառապաշարը, գրավոր և բանավոր խոսքը նախընտրելու հմտություն
- Պատմաաշխարհագրական զանազան հարցերի վերաբերյալ Պատմագիտության մեջ առկա զանազան տեսակետների նկատմամբ քննադատական մոտեցում եւ սեփական վերաբերմունքի արտահայտում:

ԴԱՍԸՆԹԱՅԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ՆԿԱՐԱԳԻՐ

- ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՔԱՆԱԿ - 5
- ԼՍԱՐԱՅԻՆ ԺԱՄ – 64
- ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ - 32
- ՍԵՄԻՆԱՐ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ – 32
- ՇԱԲԱԹԱԿԱՆ ԺԱՄ – 4

ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ

Հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչներին ու ծրագրերին համապատասխան «Հայոց պատմություն» դասընթացի իմացություն

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ
ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ
ՄԵԹՈԴՆԵՐ

- դասախոսություն
- զրույց
- բանավեճ
- սեմինար պարապմունքներ
- սկզբնաղբյուրների ուսումնասիրություն
- զննական մեթոդներ /քարտեզների ուսումնասիրություն, աշխատանք ուրվագծային քարտեզներով/

ԴԱՍԸՆԹԱՅԻ ՀԱՄԱՌՈՏ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հայկական լեռնաշխարհի բնական պայմանները
 - 1.1 Հայկ.լեռնաշխարհի տարածքն ու սահմանները, ռելիեֆի ընդհ. բնութագիրը:
 - 1.2 Կլիմայական պայմանները, ջրագրությունը,
 - 1.3 Բուսական ու կենդանական աշխարհը, բնական հարստությունները:
2. Հին Հայաստանի տարածքն ու վարչական բաժանումները սկսած առաջին հիշատակություններից մինչև VII դար:
 - 2.1 Վաղ պետական կազմավորումները Հայկական լեռնաշխարհում: Վանի թագավորության տարածքն ու սահմանները
 - 2.2 Պարսից Աքեմենյան տերությունը եւ Հայաստանը: Հայկական թագավորությունները Ք.ա. IV-II դարերում
 - 2.3 Հայաստանի տարածքը եւ վարչական կարգը Ք.ա. II-I դարերում: Տիգրան Մեծի տերությունը
 - 2.4 Հայաստանի տարածքն ու վարչական կարգը Արշակունիների օրոք
 - 2.5 Մեծ Հայքի թագավորության 387թ բաժանումը: Հայաստանի տարածքն ու վարչական կարգը IV-VII դարերում
 - 2.6 Հին Հայաստանի ճանապարհները և նրանց քաղաքական ու տնտեսական նշանակությունը
3. Հայաստանի պատմաաշխարհագրական նկարագիրը, Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների...
4. Հայաստանի վարչաքաղաքական բաժանման համակարգը VII դարից մինչև մեր օրերը
 - 4.1 Հայաստանի վարչաքաղաքական բաժանման համակարգը VII դարի կեսերից մինչև IX դարի կեսերը:
 - 4.2 Հայաստանի վարչաքաղաքական և տնտեսական

դրությունը բյուզանդական ներխուժման և սելջուկյան տիրապետության դեմ մղվող պայքարի ժամանակաշրջանում:

4.3 Հյուսիս-արևելյան Հայաստանի վարչաքաղաքական դրությունը XII-XIII դարերում: Կիլիկիայի հայկական պետությունը պատմաաշխարհագրական առումով:

4.4 Հայաստանի վարչաքաղաքական դրությունը XIII-XIX դարերում

4.5 Հայաստանի տարածքը, սահմանները և վարչական կարգը երեք հանրապետությունների շրջանում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԻՄՆԱԿԱՆ

1. Դասախոսությունների փաթեթ
2. Գաբրիելյան Հ., Հայկական լեռնաշխարհ, Երևան, 2000
3. Երեմյան Ս. Մեծ Հայքը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963
4. Հակոբյան Թ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1968:
5. Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 2001
6. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1-5, Երևան 1986-2001...
7. Հիւբշման, Հ., Հին Հայոց տեղոյ անունները, Վիեննա, 2007

ԼՐԱՑՈՒՑԻՉ

1. Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Երևան, 1979
2. «Մովսէսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց», Տիփլիս, 1913
3. «Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց», Երևան, 1987
4. «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց», Երևան, 1996
5. «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», կազմեց Հ.Նալբանդյան, Երևան, 1965
6. «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910
7. «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», Պրոֆ. Դր.Լ.Մելիքսեթ-Բեկ, Երևան, 1934
8. Մանանդյան Հ. Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, Երևան, 1936

ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՁԵՎԵՐԸ

1 ընթացիկ ստուգում /գրավոր/, անհատական աշխատանք և ամփոփիչ ստուգում /բանավոր/: Հարցաթերթիկները կազմված են 3 հարցից՝ 30, 30, 40 միավորներով: Յուրաքանչյուրը 100 միավոր առավելագույն արժեքով:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ
ԵՎ ԿՇԻՌ

1. Բաղադրիչ 1 – 10% (հաճախումներ)
2. Բաղադրիչ 2 – 20% (ընթացիկ ակտիվություն)
3. Բաղադրիչ 3 – 70% (ամփոփիչ ստուգում)

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

Գնահատման թվային միավորը	Տարային գնահատական	Գնահատականի պաշտոնական թվային համարժեքը	
96-100	A+	5+	
91-95	A	5	
86-90	A-	5-	
81-85	B+	4+	
76-80	B	4	
71-75	B-	4-	
66-70	C+	3+	
61-65	C	3	
40-60	C-	3-	
Մինչև 39	D	2	

Հ/Հ	Թեմա	Լսարանային ժամեր				Ուսանողի ինքնուրույն աշխատա- ժամանակը	Ուսանողի ընդհանուր աշխատա- ժամանակը
		դ.	ս.	գ.	լ.		
1.	Առարկայի նպատակն ու խնդիրները: Հայկ.լեռնաշխաչի տարածքն ու սահմանները, ռելիեֆի ընդհ. բնութագիրը: Փոքր Կովկաս լեռնահամակարգ, Արագած ու Արայի լեռներ	2				6	8
2.	Ռելիեֆի ընդհանուր բնութագիրը/ Հյուսիսային հրաբխային բարձրավանդակ, Հայկական պար, Շարիան-Օաղկանց լեռներ, Արաքսի, Եփրատի ու Արածանիի հովիտներ /	2				6	8
3.	Ռելիեֆի ընդհանուր բնութագիրը. Բյուրակն-Մնձուրյան,/ Կոտուր-Զագրոսի, Անտիպոնտական –Անտիտավրոսի լեռներ, Վանա լճի ավազան, Հայկական Տավրոս	2				6	8
4.	Կլիմայական պայմաններն ու ջրագրությունը: Բնական հարստությունները Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները և դրանց տնտեսական ու քաղաքական նշանակությունը		2			6	8
5.	Հայկական լեռնաշխարհ		2			6	8
6.	Վաղ պետական կազմավորումները Հայկական լեռնաշխարհում: Վանի թագավորության տարածքն ու սահմանները	2				6	8
7.	Պարսից Աքեմենյան տերությունը եւ Հայաստանը: Հայկական թագավորությունները Ք.ա. IV-II դարերում	2				6	8
8.	Հայաստանի տարածքը եւ վարչական կարգը Ք.ա. II-I դարերում: Տիգրան Մեծի տերությունը		2			6	8
9.	Հայաստանի տարածքն ու վարչական կարգը Արշակունիների օրոք	2				6	8
10.	Մեծ Հայքի թագավորության 387թ-ի բաժանումը: Հայաստանի տարածքն ու վարչական կարգը IV-VII դարերում		2			6	8
11.	Միջնադարյան Հայաստանի պատմաաշխարհագրական նկարագիրը : Բարձր Հայք աշխարհը պատմաաշխարհագրական առումով	2				6	8

12.	Ծոփք եւ Աղձնիք աշխարհները պատմաաշխարհագրական առումով	2				6	8
13.	Տուրուբերան, Մոկք, Կորճայք աշխարհները պատմաաշխարհագրական առումով		2			6	8
14.	Վասպուրակա եւ Պարսկահայք աշխարհները պատմաաշխարհագրական առումով	2				6	8
15.	Սյունիք, Ուտիք ու Արցախի աշխարհները պատմաաշխարհագրական առումով		2			6	8
16.	Գուգարք, Տայք եւ Փայտակարան աշխարհները պատմաաշխարհագրական առումով		2			6	8
17.	1-ին միջանկյալ քննություն					5	5
18.	Անհատական աշխատանք					5	5
19	Ամփոփիչ ստուգում					12	12
						118	150